ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ կառավարություն և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ համագործակցության շրջանակ

«Կոտայքի և Գեղարքունիքի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագիր

2016թ. ապրիլի 5-ին Հայաստանի Հանրապետության, ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության, և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (այսուհետ՝ Բանկ), Ծրագրի շահառու համայնքապետարանների և Բանկի միջև ստորագրվել են «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) վարկային և իրականացման և աջակցության համաձայնագրերը, որով չեղարկվել է ՀՀ Կոտայքի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքների 2014թ. դեկտեմբերի 19-ին կնքված համաձայնագրերը՝ ծրագիրը ընդլայնելու և ՀՀ Գեղարքունիքի մարզի մնացած համայնքները ծրագրում ներառելու նկատառումով:

Ծրագրի շրջանակում նախատեսված խորհրդատվական ծառայությունների մատուցման համար խորհրդատվական ընկերությունների ընտրության համար ձևավորված հանձնաժողովը գնահատել է «Կորպորատիվ զարգացում, շահառուների մասնակցություն և համայնքային աջակցության ծրագրի» (CorporateDevelopment, StakeholderParticipationandMunicipalitySupportProgramme) և «Ծրագրի իրականացման աջակցության» (Project ImplementationSupport) համար դիմած խորհրդատվական ընկերությունների տեխնիկական առաջարկները:

Մրցութային առաջարկները գնահատելու արդյունքում ընտրվելու են 2 խորհրդատվական ընկերություններ, որոնք ծրագրի համար նախատեսված դրամաշնորհային (տեխնիկական աջակցություն) բաղադրիչի շրջանակում կառուցվող աղբավայրի շահագործող ընկերության կառավարման և աղբավայրի կառուցման խորհրդատվական ծառայություններ են մատուցելու ծրագրի շահառու համայնքներին:

Ծանոթություն:

2014թ. հունիսի 16-ին ՀՀ վարչապետի հանձնարարությամբ ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը նշանակվել է «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարման» վարկային ծրագրի 2-րդ փուլի միջոցառումների կազմակերպման նպատակով ծրագրի պատասխանատու:

Ծրագրի նպատակն է կառուցել և շահագործել ԵՄ չափանիշներին համապատասխան տարածաշրջանային աղբավայր Հրազդանում, որտեղ կհավաքվի ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում գոյացած աղբը:

Ծրագրի արժեքը՝ 11 մլն. Եվրո:

Ծրագրի շահառուներ՝ ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի, Բյուրեղավանի, Եղվարդի, Ծաղկաձորի, Նոր Հաճընի, Հրազդանի, Չարենցավանի և ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի, Գավառի, Մարտունու, Վարդենիսի և Ճամբարակի համայնքներ: